

## Ինչպես դիմել ԱԲ-ի ուսուցչի զարգացման ծրագրին

- Ներկայացնել դիմում-հայտ\*
- Անցնել առարկայական թեստավորում\*\*
- Մասնակցել անհատական հարցազրույցի

## Ով կարող է դիմել ծրագրին

Ընդունելությանը մասնակցելու համար դիմորդը պետք է՝

- ունենա մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 5 տարվա մանկավարժական ստաժ,
- դասավանդի հետևյալ առարկաներից մեկը՝ ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, կենսաբանություն, հայոց պատմություն, հայոց լեզու և գրականություն\*\*\*,
- կամ սովորի մագիստրատուրայի վերջին կուրսում Նշված առարկաներից որևէ մեկի մասնագիտացմամբ՝ մանկավարժական որակավորման հնարավորությամբ:

Ընդունելությունը կատարվելու է հետևյալ առաջնահերթության սահմանմամբ:



\* Դիմում-հայտը հասանելի կլինի [մարտի 15-ից ապրիլի 10-ը](#) «Այբ» կրթական հիմնադրամի [կայքում](#), Արարատյան բակալավրիատի [կայքում](#) և [Ֆեյսբուքյան](#) էջում:

\*\* Թեստավորման թեմաները և թեստերի օրինակները ևս հասանելի կլինեն [մարտի 20-ից](#):

\*\*\* Արարատյան բակալավրիատով նախատեսված մյուս առարկաները դասավանդող ուսուցիչների ներգրավումը ծրագրում կմեկնարկի 2017 թվականի 4-րդ եռամսյակում:

\*\*\*\* Երևանից ընդունելություն կկատարվի միայն այն դեպքում, եթե մարզային փուլում չհավաքագրվեն անհրաժեշտ թվով դիմորդներ: